Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, հունվար – մարտ, 2026, № 1 (69-70), БАРЕГОРЦ

Դրվագ Նորթ Հոլիվուդի «Բելլեգա» սրահում կայացած դրամահավաքից

«ՏՈ՛ՒՐ ԻՆՁ ՔՈ ՁԵՌՔ, ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ»

19-րդ դարի 50-ականներուն գրված Մկրտիչ Պէշիկթաշլեանի ազգային համախմբման այս կարգախօսն այսօր ալ արդիական է:

Բացառիկ յաջողութեամբ անցաւ «Գուրգէն Մելիքեանի՝ Քաշաթաղի բազմազաւակ ընտանիքների հիմնադրամ»-ի այս տարուան կազմակերպած դրամահաւաք-հանդիսութիւնը ԱՄՆ-ի Քալիֆորնիա նահանգի Նորթ Հոլլիվուտ քաղաքի «Բելլեզա» սրահէն ներս (15 Նոյեմբեր 2025):

Հիմնադրամին սատարողները բերնէ բերան լեցուցեր էին սրահը: Գոհունակութեան ու երախտագիտութեան մթնոլորտ մը կը տիրէր ներկաներու դէմքերուն վրայ: Արդարեւ, ներկաները վստահութեամբ լեցուած էին հիմնադրի՝ Փրոֆ. Գուրգէն Մելիքեանի տարած յոյժ արդիւնաւէտ աշխատանքին հանդէպ, հաւատացած էին, որ իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները միշտ ալ հասեր են նպատակին:

44-օրեայ Արցախեան պատերազմին եւ 2023 թ. սեպտեմբերեան էթնիկ զտումին հետեւանքով հազարաւոր արցախցիներ՝ մեր եղբայրներն ու քոյրերը բռնագաղթուեցան իրենց հազարամեայ բնօրրանէն՝ տարածուելով Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ շրջաններու եւ քաղաքներու մէջ: Այժմ նոր մարտահրաւէր մը կը ծառանար Հիմնադրամի առջեւ՝ անյապաղ օգնութեան հասնիլ մեր հայրենակիցներուն: Մեծ պատասխանատուութեամբ «Գուրգէն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»՝ լծուեցաւ գործի:

Հանդիսութեան ներկայ էին Քալիֆորնիայի մէջ յայտնի հայ ազգայիններ, որոնց շարքին էին՝ «California Courrier» թերթի հանրայայտ խմբագիր եւ վաստակաւոր հասարակական գործիչ Յարութ Սասունեան, ազատամարտիկ Մարգար Մելքոնեան (Մոնթէ Մելքոնեանի եղբայրը), հրապարակախօս եւ

յայտնի բժիշկներ Վաղարշակ Փիլոսեանը, Ռաֆֆի Պալեանը, Սարգիս Մեսրոպեանը: Ընտանեօք հանդերձ ներկայ էր Պրն. Արմոնդ Վարդանեանը՝ հիմնադրամի լիազօր ներկայացուցիչը ԱՄՆ-ում:

Գուրգէն Մելիքեանի հրաւէրով օրուան խորհուրդին մասին կարճ ելոյթ մը ունեցաւ յայտնի մանկավարժ եւ խմբագիր Դոկտ. Մինաս Գոճայեան որ կոչ ըրաւ ներկաներուն շարունակել սատար կենալ արցախցի բազմազաւակ ընտանիքներու

Մելիքյանների երեք սերունդ դրամահավաքի ժամանակ:

զանազան կարիքներուն :

Գուրգէն Մելիքեան ներկայ էր իր որդւոյն՝ դիւանագէտ Վահագն Մելիքեանի, եւ վերջնիս որդւոյն՝ Դաւիթի հետ: Հաճելի էր տեսնել Մելիքեաններու երեք սերունդ՝ հայր, որդի եւ թոռ՝ նուիրուած այս առաքելութեան: Երեքն ալ շնորհակալութիւն յայտնեցին ներկաներուն եւ աշխարհատարած սատարողներուն, որոնք իրենց նիւթական օժանդակութեամբ աշխատած էին թեթեւցնել մեր տարաբախտ հարազատներուն հոգսերը:

Տեսաերիզի միջոցով ներկաները ծանօթացան «Global Medic» Կանադական բարեսիրական կազմակերպութեան եւ տեղեկացան անոր մատուցած օգնութեան (սննդեղէն եւ հագուստեղէն): Յուզիչ էր թոռ Մելիքեանի հայերէն եւ անգլերէն ելոյթը, որտեղ երիտասարդը շեշտեց թէ պապիկէն աւանդուած պարտականութիւնը սիրով պիտի շարունակէ:

Ներկայացուեցաւ նաեւ գեղարուեստական բարձրորակ եւ տպաւորիչ յայտագիր մը, որուն կը մասնակցէին սաքսոֆոնահար Առնօ Ստեփանեանը, սիրուած երգիչ Դաւիթ Սամուէլեան՝ նուագակցութեամբ Արամ Լեփեճեանի, հայրենի երգչուհի Անահիտ Սահակեանը՝ ժողովրդական սիրուած երգերով:

Յայտագրին առանձնակի փայլ տուաւ ազգագ-

Հայրենասիրական երգերով անհատույց գերագույն հաճույք պատճառեցին (աջից ձախ) Դավիթ Սամուելյանը, Անահիտ Սահակյանը և Արամ Լեփեճյանը

րական պարերու «Արարատ» համոյթը՝ մթնոլորտը շիկացնելով ազգային ոգիով (ղեկ. Ալբերտ Վարդանեան):

Վստահօրէն այս տարուան դրամահաւաքը հասաւ իր նպատակին՝ գոհ ձգելով թէ՛ ներկաները եւ թէ՛ կազմակերպիչները:

Կը մաղթենք եւ կը յուսանք՝ յառաջիկային եղբայրական այսպիսի ձեռնարկներու շնորհիւ կը վերականգնուի արցախցիներու բնականոն կեանքը Հայրենիքի մէջ:

Դր. Մինաս Գոճայեան, Լոս Անջելես

"We are your brothers."

The fundraising event organized this year by the «Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh» was held with exceptional success at the "Belleza" hall in North Hollywood, California on November 15, 2025. The hall was filled with the friends and supporters of the foundation. An atmosphere of satisfaction and gratitude was dominating at the time. Indeed, attendees were filled with confidence regarding the highly effective work carried out by the founder, Prof. Gurgen Melikyan, believing that their generous donations always reached their intended purpose.

Due to the 44-day war in Artsakh, our brothers and sisters were forcibly displaced from their millennia-old homeland, spreading into the border regions and cities of the Republic of Armenia. Now, the foundation faces new challenges to urgently assist our compatriots. With great responsibility, the Foundation has committed itself to this cause.

Invitees at the Fundraising event

Prominent Armenians in California were present at the event including the well-known editor of the California Courier newspaper and distinguished public figure Harout Sasounian, freedom fighter Margar Melkonian (brother of Monte Melkonian), public speaker and renowned doctor Vagharshak Pilosian, Raffi Balian and Sargis Mesropian. Armond Vartanian, an authorized representative of the foundation was present at the event as well.

Invited by Gurgen Melikyan, the well-known educator and editor Dr. Minas Kojayan gave a brief speech about the significance of the day, urging attendees to continue supporting various needs of multichildren families displaced from Artsakh.

Gurgen Melikyan was present with his son, diplomat Vahagn Melikyan, and the latter's son, David. It was pleasant to see the Melikyan family-father, son, and grandson dedicated to this mission. All three expressed their gratitude to those present and the supporters around the world who had worked with their

Bazar sale at the event

financial assistance to alleviate the burdens of our brothers and sisters.

The attendees watched a video presentation about «Global Medic», a Canadian charitable organization, and learned about the assistance they provide. The speech by Melikyan's grandson in both Armenian and English was touching, where the young man emphasized that he would lovingly continue the duty passed down

Ararat Dance Group at the event

from his grandfather.

An entertainment program was held afterwards, featuring saxophone player Arno Stepanyan, beloved singer David Samuelian, accompanied by Aram Lepetjian and singer Anahit Sahakyan who performed popular folk songs. The program was particularly highlighted by the dance ensemble "Ararat," with the director of Albert Vardanian which ignited the atmosphere with national spirit.

We can confirm that this year fundraising achieved its goal, leaving both attendees and organizers satisfied. We hope that thanks to charity events in the future, we will restore the normal life of Artsakh compatriots and they will return to their ancestral home.

Dr. Minas Kojayan, Los Angeles

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱՁՄԱՁԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԴՐԱՄԱՀԱՎԱՔ (նոյեմբերի 15, 2025)

Last Name	Name	Dollar	AMD
Anonymous	L/M	500.00	
Abrahamia, Kyupelyan	Ohan, Haykuhi	500.00	
Abril Bookstore		250.00	
AGD Marketing Sevices, Inc		300.00	
Aghamalian	Rita	200.00	
Alaverdian	Garen	300.00	
American Heating Technology		1,000.00	
Atelier D Paris		200.00	
Avagyan	Hayk	100.00	
Badalyan	Vigen	1,000.00	
Baikar Association Inc		500.00	
Balian	Raffi	1,000.00	
Barsam	Diane	20,000.00	
Boroian	Raffi		200000
Caps Community Arts Projects		30.00	
Carolann Najarian		1,000.00	
Cohen	Mabelle	15.00	
Cohen	Mabelle	130.00	
Cohen	Mabelle	20.00	
Dr. Sarkis K Mesrobian Chiropractic Inc	Spectrum Health Center	300.00	
Empower home health care		100.00	
Encino Fireplace Shop		6000.00	
Eskandar	Alenoosh	300.00	
Fundukian	Sonia	500.00	
Galstanian	Vahan	200.00	
Ghasapian	Ara	500.00	
Gharibian	Vrej, Karine	10,000.00	
Gharibian	Vazganush,	100.00	
Gourjian	Roubin	250.00	
Gourjian	Roubin	270.00	
Guledjian	Hagob	500.00	
Hayrapetian Dental Corp	Alajajian T.	500.00	
Haytayan	L	500.00	
Javakova	Zara	5000.00	
Kahve	Tony		400000
Kanian	Mary	750.00	
Kassabian	Ara	310.00	
Kozanian	Vahan	250.00	
Kojayan	Minas, Nazelie	150.00	
Koshkaryan cardiology		1,000.00	
Koundakjian	Armineh	500.00	

Kusherian	Katia		380000
Mandala Concepts LLC		1,000.00	
Martin	Zareh	1,000.00	
Martietta		60.00	
Matevosian	Svetlana	100.00	
Marachelian	Kevork, Alis	500.00	
Manoukian	Razmik	2,000.00	
Melkonian	Markar	250.00	
Meliksetyan	Anna	40.00	
Mergelyan	Sasha	80.00	
Mesrobian	Sarkis, Talin	1,000.00	
Minasvand	Anik	100.00	
Minasvand	Anik	80.00	
Modern Nephrology,		1,000.00	
Mordecai	Nicole & David	2,000.00	
Musat	Lusine	200.00	
Nalbandian	I	500.00	
Nazarian	Bernard		2000000
Nersisian	Eduard & Karine	2,000.00	
Odatchian	Arsine	927.00	
Osullivan	J Gabrielle	100.00	
Pargev Srbazan		200.00	
Pilosyan Ani		3,500.00	
Piroyan	Lusine	100.00	
Pilossyan	Vagharshak	2,000.00	
Petrosyan	Alyosha	100.00	
Petrossian	Patrick	$1,500.00	
Samvelian	David	$1,000.00	
Sargsyan	Arevik	$125.00	
Setian	Karen	$1,000.00	
Tchobanian Khatchadourian	Aram and Aida	$1,000.00	
Torosian	Ailin	$300.00	
Vanetsian	K.	$10,000.00	
Vartanian	Armond	$50.00	
Villarreal	Jennifer	$200.00	
Yegiyants	Artoush	$250.00	
Zargarian	Aregnaz	$400.00	
Zargarian	Hripsime	$300.00	
		$ 89,987.00	2,980,000.00

2023 թ. սեպտեմբերի վերջին Հայոց Արցախը բռնի հայաթափվեց, ու տեղահանված մեր հայրենակիցներն այսօր բնակվում են ՀՀ տարբեր մարզերում: Բազմազավակ շատ ընտանիքներ ունեն նաև նյութական աջակցության խնդիր: Այս հարցում կարևոր դեր ունի «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի

«Global Medic» team visits the family of Nubar Danielyan, The family with 3 children was displaced from Majkalashen, Artsakh

բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»: Այս բարեգործական կառույցին բազմիցս եմ անդրադարձել՝ սկսած 1996-ից, երբ բնակություն հաստատեցի Քաշաթաղի Բերձոր շրջկենտրոնում և աշխատում էի կրթության համակարգում: Այդ ժամանակ արդեն գործում էր սույն Հիմնադրամը և նյութապես աջակցում էր շրջանի բազմազավակ ընտանիքներին: Կարևոր էին նաև Հիմնադրամի գործադիր տնօրեն, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան Գուրգեն Մելիքյանի նախաձեռնությամբ իրականացված ծառատունկներն Արցախի տարբեր վայրերում ու մանավանդ Բերձորի տարածքում:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո էլ, քանի դեռ բաց էին ճանապարհները, Հիմնադրամի գործադիր տնօրենն այցելում էր Արցախ, մարդասիրական աջակցություն ցուցաբերում Բերձորում, Աղավնոյում, Լիսագորում, Եղցահողի, Հին Շենի բազմազավակ ընտանիքներին, դպրոցների ուսուցիչներին ինչպես նաև՝ Արցախի այլ շրջաններում, Ստեփանակերտում բնակվող կարիքավոր ընտանիքներին: Սակայն եղավ Արցախի հայաթափման ողբերգությունը, և այժմ ավելի քան 100 բազմազավակ արցախցիներ աջակցություն են ստանում հիմնադրամից: Աջակցությունն իրականացվում է յուրաքանչյուր ամիս: Բազմազավակ ընտանիքներին հատկացվում է սնունդ և հագուստեղեն:

Հիմնադրամն աջակցում է նաև ուսանողներին՝ ուսման վարձավճարի ամբողջական կամ մասնակի հատկացումով:

2024 թ.-ից հիմնադրամի հետ համագործակցում է կանադական «Գլոբալ Մեդիկ»կազմակերպությունը՝ հատկացնելով գլխավորապես սնունդ:

2026 թ. փետրվարի 4-ին հիմնադրամի գործադիր տնօրենը, հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանը, Թոնի Կահվեն, Աշոտ Պողոսյանը, «Գլոբալ Մեդիկ»-ի կամավորներ Մորգան Քլարկը, Սոֆիա Հասանը և Մադալենա Մոնտեյրոն այցելեցին Արարատի մարզի Նոր Խարբերդ, Արմավիրի մարզի Շահումյան և Արագածոտնի մարզի Օշական բնակավայրեր:

Gurgen Melikyan, Morgan Clark, Sofia Hasan, Madalena Monteiro visit the family of Lilit Baghdasaryan. The family with 6 children displaced from Kashatagh region, Artsakh

Նոր Խարբերդում է բնակվում 3 երեխաների մայր Նուբար Դանիելյանը, ում ամուսինը և երկու եղբայրները հերոսաբար զոհվել են Արցախյան գոյամարտում՝ 2023 թ. սեպտեմբերի 23-ին՝ հայրենի Մաճկալաշենի պաշտպանության ժամանակ:

Քաշաթաղի շրջանից է բռնի տեղահանվել ու 5 երեխաների հետ Նոր Խարբերդում բնակություն հաստատել Լիլիթ Բաղդասարյանը: Շահումյան գյուղում է հաստատվել 12 երեխաների մայր, բերձորցի Քրիստինե Ամյանը: Իսկ բերձորցի Տոնոյաններն այժմ բնակվում են Օշականում: Բոլոր ընտանիքներին հատկացվեց սնունդ ու հագուստ՝ համապատասխան քանակով:

Visiting the family of Amyan Christine with 12 children. Forcibly displaced from c.Berdzor, Artsakh

Գ. Մելիքյանը կարևորում է նաև հայ արտադրողի շահերը, և բազմազավակներին հատկացված սնունդը գնում է տեղական համապատասխան գործարաններից:

Օրվա ընթացքում Գ. Մելիքյանի ուղեկցությամբ հյուրերն այցելեցին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, ծաղիկներ խոնարհեցին Մաշտոցի շիրմաքարին, տեղեկացան նրա կենսագրության և 405 –ից ի վեր հարատևող հայոց գրերի մասին: Այց եղավ նաև Ոսկեվազի գինու գործարան:

Արցախից բռնի տեղահանված ու ՀՀ տարբեր մարզերում, Երևանում բնակություն հաստատած մոտ 70 ընտանիք էլ 2026 թ.փետրվարի 7-ին և 8-ին մարդասիրական աջակցություն ստացավ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մասնաշենքում:

Մեր բոլոր հովանավորները քաջատեղյակ են Հիմնադրամի հայապահպան գործունեությանը և ըստ կարելվույն աջակցում են նրան:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԿՐԿԻՆ ՈՒ ՄԻՇՏ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

2026 թ. հունվարի 15-ը նշանավոր էր «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ուսումնամարզական համալիրի

Գ. Մելիքյանն ու Ալ. Գրիգորյանը հուշագրի ստորագրման ժամանակ

աշխատակիցների համար, ովքեր «հյուրընկալել» էին միմյանց: Նոր տարին սկսվեց արդեն տարիների ջերմ բարեկամություն հաստատած այս երկու կազմակերպությունների աշխատակիցների հերթական հանդիպմամբ: Ուսումնակրթական հաստատություն լինելով՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համալիրը մեծ պատրաստակամությամբ է օժանդակում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին», որը տասնամյակներ շարունակ ամենաբազմազան նյութական և այլ կարգի օգնություն է տրամադրել Արցախի Քաշաթաղի շրջանի գյուղական բնակավայրերի բազմազավակ ընտանիքներին՝ նրանց տրամադրելով սննդամթերք, հագուստեղեն, կենցաղային տեխնիկա և այլ անհրաժեշտ ապրանքներ: Եվ հիմա՝ մեր օրերում, հիմնադրամը նույն ջանասիրությամբ է օգնում Հայաստանում ապաստանած արցախցիներին՝ բազմազավակ և հատկապես չորսից տասներկու երեխա ունեցող ընտանիքներին:

Հանդիպումը, որին մասնակցում էին Հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների խորհրդի նախագահ Արծրուն

Համատեղ քննարկում

Ավագյանը, խորհրդի անդամներ՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանը, բրիտանահայ բարերար Թոնի Կահվեն, իսկ հրավիրող կողմից՝ ուսումնամարզական համալիրի տնօրեն Ալեքսանդր Գրիգորյանը, նրա տեղակալ տիկին Ելենա Ամիրխանյանը, համալիրի աշակերտական խորհրդի անդամները, ուսուցիչները և աշխատակիցները, անցավ բարեկամական և գործնական ամենաջերմ մթնոլորտում, ուր քննարկվեցին ապագայի՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր:

Ընթերցողներին ծանոթացնելով նշենք, որ կրթահամալիրն իր տեսակով աննախադեպ է ողջ Հայաստանում. ոչ միայն տեղակայված է շքեղ և հարմարավետ կառույցում, այլև ունի լողավազան, մեծ մարզադահլիճ, տարբեր խաղահրապարակներ, որտեղ անց են կացվում ֆուտբոլի, հոկեյի, բասկետբոլի, վոլեյբոլի և այլ մարզաձևերի մրցումներ: Նույն-

քան գրավիչ է համալիրի հանդիսությունների սրահն՝ իր հարմարավետ բեմով, և ընդարձակ ճաշարանը: Կրթօջախն ունի նաև մանկապարտեզ և այլ ուսումնական կառույցներ, որտեղ տիրում են հայեցի շունչն ու ոգին, երգն ու աստունքը, խոսքն ու մշակույթը: Բրիտանահայ Թոնի Կահվեն, այս ամենը դիտելով, ասաց, որ ինքը աշխարհի շատ քաղաքներում է եղել և անգամ Անգլիայում այսպիսի հարմարություններ չի տեսել, մանավանդ ուսումնական մասնաշենքերում տիրող այն կարգուկանոնը, ուսուցչական համակազմի կողմից դրսևորվող այն պատասխանատվությունը, որին ինքը ականատես եղավ այս մի քանի ժամում: Ընթացքում պարզվեց նաև, որ համալիր այցելած գեղանկարիչ Շմավոն Շմավոնյանի համար այս այցելությունն առաջինը չէր: Նա կարճ ժամանակ առաջ էր եղել այստեղ, վարպետության դաս անցկացրել նկարչական խմբակի անդամների հետ, ընթացքում նկարել իր կտավներից մեկը, որը, ինչպես և նրա բոլոր գործերը, այնքան լեցուն են լույս-արևներով ու արև-լույսերով, այնքա՛ն լավատեսական տրամադրություններ արթնացնող է և այնքա՛ն լի կենսասիրությամբ ու բնութենապաշտությամբ: Այդ կտավը, որտեղ պատկերված են ծաղիկներ, նկարիչը նվիրել է համալիրի տնօրինությանը՝ ասես ընդհանրացնելով կյանքի ծաղիկ այն սերնդին, որը ձևավորվում է համալիրի կամարների ներքո: Հոգաբարձության խորհրդի նախագահ Արծրուն Ավագյանը համալիրի տնօրենին հանձնեց Հիմնադրամի խորհրդի շնորհակալագիրը, որում, ի թիվս կրթական համալիրին տրված գնահատումների և արժևորումների, նշված էր նաև այն մեծ դերը, որն ունի Ալեքսանդր Գրիգորյանն անձամբ, ով հիմնադրամի կողքին կանգնած է եղել դեռևս համալսարանում աշխատած տարիներից՝ միշտ սրտացավ, տևական ու մեծ հայրենասիրությամբ լեցուն: Պրոֆ. Ավագյանն իր խոսքում ներկաներին հավելյալ տեղեկացրեց նաև, որ այն հողատարածքը, որտեղ կառուցված է կրթական օջախը պատմական-ազգային արժեք է, քանի որ հենց այստեղ է 1918-1920 թթ. գտնվել Քանաքեռի Սուրբ Հակոբ եկեղեցում և նրա շրջակա տարածքում տեղաբաշխված Հայաստանի Առաջին Հանրապետության հայկական կամավորական երկրորդ զորագնդի (որի յոթերորդ ջոկատում գեներալ Չեռնոզուբովի հրամանատարությամբ ծառայել է նաև բանաստեղծ Եղիշե Չարենցը) հրաձգարանը, որտեղ զինվորական զորավարժություններ են անցկացրել մարտիկները և որոնց այդ փորձերին այցելել են նաև զորահրամանատար Անդրանիկը, ռազմական նախարար Դրոն, Երևան քաղաքի պարետ Արշո Շահխաթունին և այլ ռազմական ու պետական անձինք: Հանդիպում-քննարկումն ավարտվեց Ալ. Գրիգորյանի եզրափակիչ խոսքով: Նա վերստին հավաստեց, որ համագործակցությունը շարունակական է լինելու, քանի որ իրենք տարիների ընթացքում արդեն համոզվել են, որ հիմադրամն իր ամեն մի լուման ծախսում է տեղին և նպատակին՝ սատար կանգնելով հայրենազուրկ դարձած մարդկանց, ինչպես նյութապես, այնպես էլ բարի խոսքով ու հուսադրությամբ:

Տնօրեն Ալ. Գրիգորյանը հիմադրամին հանձնեց կրթահամալիրի աշխատակիցների կողմից հավաք-


ГАЗПРОМ АРМЕНИЯ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ՏՐՎՈՒՄ Է

Առ այն, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցի բարեգործական ցուցահանդես-վաճառքից ստացված հասույթի մի մասը՝ **800,000** ՀՀ դրամ, ուղղվում է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամին՝ աջակցելու նպատակով:

15 հունվարի, 2026 թ. Տնօրեն Ալ. Գրիգորյան

Նվիրատվության հավաստագիրը

ված 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամը, որի վերաբերյալ կազմվեց և ստորագրվեց համապատասխան «հանձնման-ընդունման» արձանագրություն: Գումարը մուտքագրվելու է բանկ և ծախսվելու է ըստ անհրաժեշտության, որի վերաբերյալ, ինչպես նախկինում է եղել, հաշվետվություններ են տրվելու ինչպես Հիմնադրամի հոգաբարձության խորհրդին, այնպես էլ տպագրվելու են «Բարեգործ» պաշտոնաթերթում:

Կրթահամալիրի տնօրինությունը նաև այլ անակնկալ էր պատրաստել՝ աշակերտների թատերական ներկայացումը, որը դիտվեց մեծ բավականությամբ և, կարելի է ասել, զարմանք հարուցեց թե՛ բեմադրման կատարելությամբ, թե՛ աշակերտների դերասանական վարպետությամբ: Հետո իմացանք նաև, որ թատերախումբը Սանկտ Պետերբուրգում անցկացված աշակերտական թատերական խմբերի մրցույթում «Գրանդ պրի» է շահել, հիացրել տասնյակ երկրներից հրավիրված մասնագետներին ու հենց տեղի արվեստասեր հանդիսականներին:

Հանդիպման օրվա հիշատակի նկար

«Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից…»:

Գ. ՆԺԴԵՀ

Խորապես ճշմարիտ է մեծ զորավարի այս խոսքը և առավել արդիական՝ մեր օրերում: Բացվող ամեն օրվա հետ պակասում, նվազում է սերը թե՛ ուղղահայաց՝ մարդ– Աստված և՛ թե հորիզոնական՝ մարդ-մարդ փոխհարաբերությունների մեջ: Բազմաթիվ ու բազմապիսի շերտավորումներով, տարբեր և տարակողմ հարվածներով ուղղված հենց մեր աստվածաշնչյան ազգ լինելու հենքի խարխլմանն ու ինքնութենական՝ գոյի ու նկարագրի կորստին:

Օրեր, որտեղ առավել քան երբևէ, անհրաժեշտ է ընտրություն կատարել Հայրենիքն իսկապես սիրելու և կամ այդ սիրո մեջ թերանալու, պակաս, ոչ ամբողջական սիրով սիրելու մեջ:

Թերևս այստեղ, որպես հակակշիռ կամ հանձնառու հարկադիր ընտրության դրական հակադրություն, տեղին է անդրադառնալ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսոր պրն. Գուրգեն Մելիքյանին, ով օրինակ է Հայրենիքն իսկապե՛ս, անմնացո՛ղդ ու անվերապա՛հ սիրող մարդու: Մարդ, ով մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին և դեռ շարունակում է չարիքի դեմ իր հավիտենական կռիվը:

Գնդապետ Մելիքյանը 1988-1994 թվականներին. գործուն մասնակցություն է ունեցել Արցախի ազգային-ազատագրական շարժմանը: Արցախ է ներկրել կապի միջոցներ, մարդասիրական օգնություն, մասնակցել է Մաճկալաշենի կամավորական ջոկատի կազմավորման, զինելու և հանդերձավորելու աշխատանքներին:

Արցախյան ազատամարտի ընթացքում նա եղել է Ազատագրական բանակի հրամանատարի արտաքին կապերի գծով տեղակալ (1993-1999 թվականներին):

Արցախի Ասկերանի շրջանից տեղահանված Վարսիկ Սարգսյանի յոթ հոգանոց ընտանիքին Աղաբաբյան քույրերը սննդի օգնություն հասցրեցին:

Աղաբաբյան քույրերը այցելեցին Արցախի Ասկերանի շրջանից տեղահանված Ավանեսյանների հինգ հոգանոց ընտանիքին

Սեր ու նվիրում առ Հայրենիք, որը ևս մի շերտավորում ստացավ 1995 թ.՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» ծնունդով, որի առ այսօր անընդմեջ գործունեությամբ իրականացվում են հայրենասիրական-բարեգործական բազմաբնույթ միջոցառումներ:

Հատկանշական է, որ Հիմնադրամը երբե՛ք չի դադարել մարդասիրական իր աջակցությունն ու օժանդակությունը տրամադրել արցախցի բազմազավակ կարիքավոր ընտանիքներին, ինչպես 44–օրյա պատերազմի, 9 ամսյա շրջափակման ողջ ընթացքին, այնպես էլ՝ Արցախ աշխարհի ամբողջական բռնազավթման հետևանքով հարկադրաբար իրենց տներն ու շեները լքած արցախցիներին, ովքեր հանգրվանել են Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում, այդ թվում՝ նաև Տավուշում:

Մարդ– Հայրենիք. եթե փորձեմ մեկ արտահայտության մեջ տեղավորել պրն. Մելիքյանի էությունն ու տեսակը, ապա միանշանակ դա կլինի:

Բարեգործական Հիմնադրամ, որին կամավոր անդամակցության մի փոքր մասնաբաժնի հնարավորություն արդեն ամիսներ շարունակ ունենք նաև մենք՝ Ռուզաննա և Սյուզաննա Աղաբաբյան քույրերս:

Մեզ համար մեծ պատիվ, պատասխանատվություն և երջանկություն է դա: Երջանկություն՝ մեր սրբազան Հայրենիքին ծառայելու իմաստով, բոլորիս ունեցած հարստության ամբողջական գիտակցություն, որի պահպանության ու փայփայումի համար անհրաժեշտ էր ամեն մեկիս նվիրումն ու սերը, որում, ցավոք սրտի, թերանում ենք երբեմն:

…Երանի՜ իսկապես չթերանայինք յուրաքանչյուրս մեր բաժին սիրո մեջ առ նվիրական Հայրենիքը, որը ջրից առավել արյուն է տեսել…

… Ամեն դեպքում լիահույս ենք, որ վերադարձ լինելու է, սակայն դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է յուրաքանչյուրիս անկեղծ ներհայեցում, ինքնաքննություն՝ խոստովանության, զղջումի ու ապաշխարության համար…

Հիմնադրամի կամավորներ՝
Ռուզաննա և Սյուզաննա Աղաբաբյաններ
գ. Կողբ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնել հարգելի պրն. Գուրգեն Մելիքյանին, նրա դուստր Մերիին, Հիմնադրամի անդամ Աշոտ Պողոսյանին և հոգաբարձության խորհրդի մյուս անդամներին այն մեծասրտության, նվիրումի ու մարդասիրության համար, որով նրանք, մոռանալով սեփական հոգսերն ու խնդիրները, ջանք ու եռանդ չեն խնայում՝ աջակցելու իրենց կարիքավոր հայրենակիցներին:

Ձախից աջ՝ Մերի Քամալյանը, Գուրգեն Մելիքյանը, Քամալյանի դուստրը

Ձեր մարդկային բարձր տեսակից մենք ստանում ենք սեր, հայրական հոգատարություն և ջերմություն, ինչի շնորհիվ հաղթահարում ենք մեր հոգու վախերն ու մենակության զգացումը: Ձեզ նման մարդկանց հանդիպելով՝ լցվում ենք պայծառ ապագայի հավատով և հույսով: Թող Աստված միշտ ուղեկից լինի Ձեզ, իսկ Ձեր մատուցած բարին՝ բազմապատկված վերադառնա Ձեզ ու Ձեր ընտանիքներին: Հավատն առ Աստված պետք չէ ուրիշ տեղ փնտրել, քանզի Աստված մեր հոգու մեջ է:

Հարգանքով՝ Մերի Քամալյան,
Բոնի տեղահանված ԼՂՀ Մարտունու շրջանից

* * *

Մենք' Էլենը, Մերին,Դանիելը, Հովհաննեսը և Հենրի Դարագուլյաններս, ուզում ենք անկեղծ ու խորին շնորհակալություն հայտնել Գուրգեն Մելիքյանին' մեր Մայրիկին ու Հայրիկին այս դժվար, խառնաշփոթ ու ցավոտ պահին բարեգործությամբ ու հոգեպես աջակցելու համար: Ձեր աջակցությունն ու ջերմ խորհուրդները մեզ ցույց տվեցին, թե ինչքա՛ն կարևոր են իրական հոգատարությունն ու նվիրումը, մարդկային հոգիների իրար կողք կանգնելը:

Դուք մեզ ուժ տվեցիք հավատալ, որ նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում կարող ենք գտնել հույս, համարձակություն ու ներքին խաղաղություն: Դուք մեզ ցույց տվեցիք, թե մարդ ինչքան լավ ու հոգատար մարդ կարող է լինել, ու մեզ ուժ տվեցիք, որ լավ կլինի: Ձեր սիրալիր խոսքերն ու

խորհուրդները մեզ շատ ուրախացրին, և մենք միշտ կհիշենք, թե ինչպես օգնեցիք մեր ընտանիքին:

Հերմինե Դարագույանը երեխաների հետ

Շնորհակալ ենք, որ մեր կողքին եք ու Ձեր հոգատարությամբ ու բարեգործությամբ մեր սրտերը լցրիք հույսով և ջերմությամբ: Ձեր նվիրումը մեր ընտանիքին անմոռանալի է:Հպարտ ենք, որ ճանաչում ենք Ձեզ: Մենք Ձեզ շա՛տ, շա՛տ՝ սիրում ենք: Շնորհակալությո՛ւն:

Սիրով՝ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ,
Բռնի տեղահանված ԼՂՀ Քաշաթաղի շրջանից

* * *

Որպես վավերագիր՝ ստորև հրապարակում ենք նաև ՀՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ջոկատում կռված Կիվորկ Սիմոնյանի շնորհակալագիր - նամակը: Բառացի մեջբերվող այս նամակը (ուշադրություն դարձնենք բովանդակությանը) լիարժեք պատկերացում կտա հայրենիքի զինվորին, նրա սերունդներին և մյուս շահառուներին Հիմնադրամի օգնության բնույթի մասին:

Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանին և հոգաբարձուների խորհրդի անդամներին.

Մոնթե Մելքոնյանի ազատամարտիկ
Կիվորկ Սիմոնյանից

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Ես՝ Կիվորկ Սիմոնյանս, Մոնթե Մելքոնյանի ջոկատի ազատամարտիկ եմ: Ունեմ չորս երեխա, ապրում եմ վարձով: Դուք օգնել եք երեք երեխաներիս ուսման վարձի վճարով մինչև հիմա, որի համար շնորհակալ եմ: Ինչպես նաև ինձ օգնել եք բժշկական միջամտության հարցով, որի համար էլ շատ շնորհակալ եմ:

Շնորհակալություն եմ հայտնվում նաև իմ ազգի մյուս ծնողների կողմից, որոնց զավակներին օգնել եք ուսման վարձի վճարման հարցով:

Թող Ձեր նման մարդիկ շատ լինեն ազգի մեջ, որ նվիրյալ զավակները տարբերվեն կեղծ նվիրյալներից ու դավաճաններից:

Կանխավ շնորհակալություն:

Դիմող՝ (ստորագրություն) Կիվորկ Սիմոնյան

25.02.2026

* * *

Երկու ստացական՝ տեղահանված արցախցի բազմազավակ ընտանիքներին տրված օգնությունը հավաստող.



ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Մելքոնյան Օվսաննան, ամուսինս՝ Մելքոնյան Ալբերտը, բռնագաղթվել եմ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորից: Այժմ իմ 5 երեխաների հետ բնակվում եմ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:

«Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանից և «Global Medic»-ի կամավորների անհատույց որպես օգնություն ստացա հետևյալ ապրանքները, որոնց համար ստորագրում եմ.

1. Հայկական արտադրության պահածո-3 արկղ
2. Սենդի տեսակների՝ հատկացված «Global Medic"-ի կողմից-1 արկղ:
3. Նոր Հագուստ- 9 կտոր
4. Նոր գլխարկ ձմեռային-1
5. Նոր Ձեռնոց-1

Կից ներկայացնում եմ սենդի ցանկը.

Հեռախոսահամար՝ 099510535
Անձնագիր՝ 01738433
Ազգանուն, Անուն Ալբերտ Մելքոնյան
Ստորագրություն՝
Ամսաթիվ՝ փետրվարի 8, 2026



ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Ամյան Քրիստինեն (միայնակ մայր), բռնագաղթվել եմ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորից: Այժմ իմ 12 երեխաների հետ բնակվում եմ ՀՀ Արմավիրի մարզի Օահուվյան գյուղի Ակսել Բեկուեցի փող. տուն 28 հասցեում:

«Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանից և «Global Medic»-ի կամավորների անհատույց որպես օգնություն ստացա հետևյալ ապրանքները, որոնց համար ստորագրում եմ.

1. Հայկական արտադրության պահածո-6 արկղ
2. Սենդի տեսակների՝ հատկացված «Global Medic»-ի կողմից-3 արկղ:
3. Նոր Հագուստ-2
4. Նոր Բաճկոն -2
5. Նոր Կապուշոն-2 հատ
6. Լրացուցիչ Ամանորյա փաթեթ-6
7. Նոր Պայուսակ -2 հատ

Կից ներկայացնում եմ սենդի ցանկը.

Հեռախոսահամար՝ 77462631
Անձնագիր AV 0952655
Անուն, Ազգանուն Ամյան Քրիստինեն
Ստորագրություն՝
Ամսաթիվ՝ Փետրվարի 4, 2026

Thank you note from «Global Medic»

From left to right: Board member Tony Kahve, beneficiary Rosa Tsatryan with her child, "Global Medic" volunteers Vicky Young,Steve Mitchell, Foundation's exec. dir. G. Melikyan

Vicky Young- «Global Medic» Volunteer, visited Armenia on a mission in December 2025.

"I had the great honour to meet and join the «Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh» to provide food to the displaced families from Artsah. A big thank you to you and Gurgen for being there for the families when they need it most. You can feel Gurgen's extraordinary energy and passion for his work and the way he personally connects with each of these families. In return you can see the gratitude received from the families. Coming from Canada to Armenia and seeing this firsthand was humbling and an unforgettable experience with the foundation. Thank you again to the sponsors, board members and Global Medic."

Մեր հոբելյարները

ԹՈՆԻ ԿԱՀՎԵ - 80

1995 թ. ստեղծված «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» բարեգործական իր ծրագրերն իրականացրել է հայրենի և սփյուռքահայ բարերարների նյութական ու բարոյական աջակցության շնորհիվ: Տասնամյակների ընթացքում իրավիճակներն ու հանգամանքները փոխվել են, և Հիմնադրամի հեղինակությունն աճել է այնքան, որ նրա ծրագրերի իրականացմանն իրենց նպաստն են բերել նաև օտար անհատ բարեգործներ և մարդասիրական կազմակերպություններ, ինչպես, օրինակ, կանադական «Գլոբալ Մեդիկ»-ը:

Խորհրդի նիստի ժամանակ պարգևատրվեց Թոնի Կահվեն

Հիմնադրամն ունի հոգաբարձության խորհրդի կայուն կազմ, որում ընդգրկված են նվիրյալներ ինչպես Հայաստանից, այնպես էլ սփյուռքից: Սփյուռքահայ նվիրյալ բարերարներից է հոգաբարձության խորհրդի արտասահմանյան անդամ լոնդոնահայ Թոնի Կահվեն, որի հետ կայացած մի փոքրիկ հարցազրույց սիրով ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողներին:

ԹՂԹ.- Բարի օր, սիրելի Թոնի. հիշեցնեմ բանաստեղծ Հ. Սահյանի բանաձևը՝ Ես կուզենայի, որ ամեն ծնունդ համաշխարհային փառատոն դառնար…Այս հիշեցումն անշուշտ, անտեղի չէ. ուզեք թե չուզեք արդեն Ձեր ծննդյան 80-ամյակն լրացել է, որի առթիվ Ձեզ շնորհավորում եմ, քանի որ հոգաբարձությանս խորհրդի ու Հիմնադրամիս բոլոր շահառուների համար այն, իրոք, մեծարժեք փառատոն է և նշանավորելու արժանի իրադարձություն:

Այս առթիվ Ձեզ պիտի խնդրեմ՝ պատասխանեք մի քանի հարցերի, որոնք կարծում եմ, կհետաքրքրեն մեր ընթերցողներին:

Համաձայն ենք, որ բարեգործությունը Ձեր մարդկային բնածին հատկությունն է և հայ մարդու բնավորության գիծ. ասացեք խնդրեմ, հեռավոր Լոնդոնում ապրելով, ինչպե՞ս ճանաչեցիք Գուրգեն Մելիքյանի անունը կրող այս հիմնադրամը և ի՛նչը Ձեզ կապեց նրան:

Թոնի – Հարցը պատասխան ենթադրող է ու բազմաշերտ. միայն «այո՛» կամ «ո՛չ» ըսելով չի գոհանար: Կպատասխանեմ անկեղծորեն:

Այո՛, վերջին տասնամյակներու հայության մտահոգիչ վիճակը ամեն օրինավոր հայու ալ կը մղե բարեգործության, ամեն հայ կրցածին չափ պիտի օգնե աղետի մատնված իր եղբայրակիցներուն ու քույրերուն, անոնց զավակներուն: Այդ հայերեն մեկն

ալ ես եմ, որ վաղուց ի վեր կը հետաքրքրվեր բարեգործությամբ, կը փնտրեր օգնության կերպն ու միջոցը:

Օր մը ընկերս՝ Վարուժան Սրապյան, որ անդամ էր Գուրգեն Մելիքյան հիմնադրամի հոգաբարձության խորհուրդի, ինձի ըսավ. Հայաստանի մեջ բարեգործական ասանկ հաստատություն մը կա. եթե կուզես՝ դուն ալ աշխատակցե անոր, հոգաբարձու եղիր և մեր հայրենակիցներուն օգնե որևէ ձևով:

Իմ ուժս դրամական է, և սկիզբեն ալ դրամով կօգնեի: Հետո երբ Արցախ գացինք, մեր երկրին այդ մասը տեսա, հայ տուներ, ընտանիքներ մտանք, հասկցա անոնց վիճակի բարդությունը, իմ որոշումս ալ լրջացավ ու դարձավ անկասելի:

Թղթ.- Որպես այս ոլորտում հներից մեկը՝ վաղուց եմ Ձեզ ճանաչում, և հիմա արդեն բոլորն են ճանաչում Ձեր շիտակ բնավորությունն ու օգնելու պատրաստակամությունը, հոգաբարձության խորհրդի նիստերում Ձեր հստակ դիրքորոշումն այս կամ այն խնդրարկուի դիմումը կամ շահառուին տրվելիք նպաստի չափը որոշելիս: Հաճախ է Ձեր անկեղծ խոսքը դառնում կողմնորոշիչ ու վճռական: Բանաստեղծ Սիամանթոն կարծես մարդու Քո տեսակը նկատի ունենալով է բանաձևել՝ Ու մարդկորեն անոնց մեծ ցավը կզգան: Արագ եք ըմբռնում խնդրի էությունը և հարցնում՝ դիմողն ինքը ո՞րչափ կուզե: Ըստ հարկին՝ կա՛մ հաստատում եք, կա՛մ ավելի հաճախ՝ պահանջածին հավելում կա՛մ նվազեցնում և երբեմն էլ վճռաբար մերժում, երբ դիմումը չի համապատասխանում հիմնադրամի էությանն ու նպատակներին: Ինքդ էլ ես զգում Քո ներկայության անհրաժեշտությունը խորհրդի նիստերում:

Անշուշտ, լավ եք հիշում մեծ երգահան ու դաշնակահար Առնո Բաբաջանյանին: Մի լրագրող հարցնում է նրան. Մոսկվայում էլ բնակարան ունեք, Երևանում էլ: Դուք Ձեզ որտեղացի՞ եք համարում: Պատասխանը չի ուշանում. ես Մոսկվայում երբեմն բնակվում եմ, Երևանում՝ մշտապես ապրում: Դուք էլ բնակարան ունեք և՛ Լոնդոնում, և՛ Երևանում: Նույն հարցին ի՞նչ կպատասխանեք, որտե՞ղ եք Ձեզ լավ զգում:

Թոնի.- Առնո Բաբաջանյանին ադ պատասխանը հետաքրքիր է: Մեր իրավիճակներու զուտ արտաքին նմանությունը կենթադրե համանման պատասխան: Իհա՛րկե՝ Երևանում. ան իմս է, լավ շինված, մանավանդ կենտրոնը, որ շատ հարմար է քալելու և հայ մարդ տեսնելու համար: Տարվան 11 ամիսը ես Երևան եմ, մեկ ամիսը՝ Լոնդոն: Լոնդոնը ահռելի մեծ է ու աղմկոտ, չես գիտեր՝ ուր ես. ան հարազատ չէ:

Թղթ. - Նկատվել է, որ Դուք միայն դրամական օգնություն տալով և հոգաբարձության խորհրդի նիստերին բարեխղճորեն մասնակցելով չեք բավարարվում. հաճախ եք անձամբ այցելում շահառուներին, շոշափում նրանց առտնին կյանքը, լինում եք հանրային մեծ միջոցառումների և տոնախմբությունների ականատես ու մասնակից: Ձեր բարեխղճությունը և գործունեության արդյունավետությունը նկատի ունենալով՝ հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը անցած դեկտեմբերի 26-ի նիստում շնորհավորելով Ձեր 80-ամյա հոբելյանը՝ Ձեզ հանձնեց իր շնորհակալագիրը և «Էջմիածնի սուրբ մասունքները» պարգևը:

Հիշատակի նկար Զինվորի վերադարձի միջոցառումից

Թոնի- Ճիշտ է նկատված. այո՛, կուզեմ իմ լիարժեք հայ ու հայաստանցի լինելս, հայության մի մասնիկը ըլլալս Հայաստանի մեջ զգալ, խորությամբ ճանչնալ ազգակիցներուս թե՛ վիշտն ու հոգսաշատ նեղությունը, թե՛ հաջողությունն ու խնդությունը: Այս պատճառով է, որ կայցելեմ Արցախից տեղահանված մեր հայրենակիցներուն, որոնց բաժանում ենք հիմնադրամի օգնությունը: Վերջերս էլ՝ հունվարի 31-ին, հիմնադրամի ղեկավարների ու հոգաբարձուներեն մեկ քանիի հետ այցելեցինք Գյումրի՝ Հայոց բանակում ծառայությունը բարեհաջող ավարտած դիրքապահ զինվոր Հայկ Միրզոյանի բարի վերադարձը շնորհավորելու, հիմնադրամի անունից անոր պարգևատրելու և շնորհակալագիր հանձնելու: Ուրախ և հաճելի տոնախմբություն էր հայ զինվորի ծնողներու, հարազատներու և անոր ընկերներու հետ: **Ցավն ալ է մերը, ուրախությունն** ալ, ես չեմ կրնար անմասն մնալ մեր ժողովրդի բնական կյանքեն, անոր լացեն ու խինդեն:

Թղթ.- Ի՞նչ եք կարծում, որքա՞ն կարող է շարունակվել Ձեր բարեգործությունը և ի՞նչ կմաղթեք մեր ընթերցողներին:

Թոնի.- Քանի դեռ ողջ եմ ու կարող. թերևս քսան տարի մը: Խոստովանեմ, որ այս գործը հոգիես կը բխե, և բոլոր հոգաբարձուները իրենց գործը սիրով կընեն, այլապես բան մը չի ստացվիր:

Ամենուն կը մաղթեմ քաջառողջություն, երկար կյանք և աս գործին նվիրում:

Թղթ. - Շնորհակալություն այս բովանդակալից զրույցի համար: Սիրելի՛ Թոնի Կահվե, թույլ տվեք կրկին շնորհավորել Ձեր վաստակած հոբելյանը և մաղթել բարեգործական երկարակեցություն ի փառս մեր հայրենիքի և հանուն մեր ազգային երազանքների իրականացման:

Ավելի քան 25 տարի Հիմնադրամն իրականացրել է տարբեր ծրագրեր, այդ թվում՝ ԽԵԱ ծրագիրը, որի շրջանակներում Արցախի մեր շահառուներին տրամադրվել է 554 կով:

2023 թվականին մեր հայրենակիցները բռնի տեղահանվեցին Արցախից և վերաբնակեցվեցին Հայաստանի տարբեր մարզերում: Հիմնադրամը շարունակում է աջակցել իր շահառուներին և վերսկսել է ԽԵԱ ծրագիրը: Ավելի քան 10 ընտանիք արդեն ստացել է կով: Մենք երախտապարտ ենք այն բարերարներին, ովքեր հավատարիմ են մնում Հիմնադրամի գործին: ԽԵԱ ծրագրին միացավ նաև հիմնադրամի հետ երկու տարի համագործակցած «Global Medic» կանադական կազմակերպությունը, և հիմնադրամը կարողացավ կովեր տրամադրել Արցախից բռնագաղթած չորս ընտանիքների:

Gayane Baghdasaryan, 4 children. The family was forcibly displaced from Shahumyan region, now living in Armavir region, Armenia. Sponsor: «Global Medic», Canada

Mnatsakanyan Gohar, 5 children. The family was forcibly displaced from Kashatagh, Artsakh. Now living in Armavir region, Armenia. Sponsor: «Global Medic», Canada

Seda Matevosyan, 5 children. The family was forcibly displaced from Lisagor, Artsakh. Now living in Ararat region, Armenia. Sponsor: «Global Medic», Canada

Hasmik Mnatsakanyan, 4 children. The family was forcibly displaced from Karvajar, Artsakh. Now living in Gegharkunik region, Armenia. Sponsor: «Global Medic», Canada

Makaryan Heghine, 9 children. The family was forcibly displaced from Martakert region, Artsakh. Now living in Gegharkunik region, Armenia. Sponsor: Nicole and David Mordecai, USA

Manukyan family, 9 children, was forcibly displaced from Berdzor, Artsakh. Now living in Shirak region, Armenia. Sponsor: Katia Kusherian, USA

Antonayn Karine, 4 children. The family was forcibly displaced from Berdzor, Artsakh. Now living in Kotayk region, Armenia. Sponsor: Andew Vartkes Keligian, USA

Vachik Makaryan, 5 children. The family was forcibly displaced from Martakert region, Artsakh. Now living in Gegharkunik region, Armenia. Sponsor: Nicole and David Mordecai, USA

Ovsanna Sardaryan, 5 children. The family was forcibly displaced from Karvajar, Artsakh. Now living in Armavir region, Armenia. Sponsor: Andrew Vartkes Keligian, USA

Arevik Grigoryan, 9 children. The family was forcibly displaced from Herik, Artsakh. Now living in Aragatsotn region, Armenia. Sponsor: Andrew Vartkes Keligian, USA

2025-2026 ուսումնական տարվա վարձեր

Երկրորդ կիսամյակ

Ամսաթիվ	ԲՈՒՀ	Նպատակ	Գումար
19/02/26	Երևանի Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիա	Ամալյան Արման, ժող. երգեցողություն, մագիստր, 1-ին կուրս (բացառություն)	300000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Թամոյան Գյուլփերի, դեղագործություն և քիմիա, 3-րդ կուրս (բացառություն)	200000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Մանուկյան Սյուզաննա, ԵԼՀ անգլ-իտալ., 2-րդ կուրս	100000
19/02/26	Արևմտյան Ուկրաինայի ազգ.համ. Երևանի ԿԳԻ	Ղևոնդյան Անահիտ, ֆինանս, բանկ. գործ և ապահովագր., 3-րդ կուրս, հեռակա	80000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Ղուլյան Էլետա, իրավագիտ. ֆակ., դատ. իրավունք և փաստաբ., մագ., 2-րդ կուրս	150000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Մարգարյան Վլադիմիր, արևելագիտ. ֆակ., թուրքագիտ., 2-րդ կուրս	150000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Վարդանյան Մելինե, միջազգ. հարաբերութ., հանրային կառավարում, 1-ին կուրս	100000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Ավետիսյան Անի, ԻԿՄ, 4-րդ կուրս (բացառություն)	400000
19/02/26	ՃԾՀԱՀ հիմնադրամ	Մկրտչյան Ժան, դիզայն ֆակ., 2-րդ կուրս, հեռակա	100000
19/02/26	Երևանի ինֆորմատիկայի պետ. քոլեջ	Ոսկանյան Հայկ, վեբ.դիզայն, 3-րդ կուրս (բացառություն)	200000
19/02/26	ՀՊՏՀ հիմնադրամ	Նուրբեկյան Ինեսա, մարքեթինգի և բիզնեսի կառավարման ֆակ., 2-րդ կուրս (բացառություն)	200000
19/02/26	ՃԾՀԱՀ հիմնադրամ	Մարտիրոսյան Կարինե, արդյուն. դիզայն կրթ. ծրագիր, 1-ին կուրս	100000
19/02/26	Մեհրաբյանի անվ. բժշկ. քոլեջ	Շեկյան Սրբուհի, քույրական գործ., 3-րդ կուրս	100000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Հովսեփյան Աննա, իրավագիտ. ֆակ., 4-րդ կուրս	150000
19/02/26	ԵՊԲՀ հիմնադրամ	Շարոյան Թինա, բուժական գործ, 6-րդ կուրս (բացառություն)	200000
19/02/26	ՀՀ հյուսիսային համալսարան	Մանվելյան Լիանա, կառավարում մասնագիտ., 3-րդ կուրս, հեռակա	100000
19/02/26	Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրամ	Սարգսյան Մանե, դեկոր. կիրառ. արվեստ, 1-ին կուրս	100000
19/02/26	Ռուս-հայկական համալսարան	Աղաջանյան Սվետլանա, ռուսական սեկտոր, լինգվիստիկա, 1-ին կուրս (բացառություն)	150000
19/02/26	Հերացու անվ. ԵՊԲՀ	Սիմոնյան Սարկիս, ատամնաբուժ., 5-րդ կուրս	120000
19/02/26	Հայկական բժշկական ինստիտուտ ԱԿ	Աջամօղլյան Հայկազ, ստոմատոլոգիա, 4-րդ կուրս	100000
19/02/26	Հայկական բժշկական ինստիտուտ ԱԿ	Մխիթարյան Նելլի, բուժ. ֆակ., 2-րդ կուրս	100000
19/02/26	Մ.Խորենացու անվ. համալսարան	Մկոյան Ալբերտ, կիրառ. մաթեմ. և ինֆորմատիկա, 3-րդ կուրս	100000
19/02/26	Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրամ	Տոնոյան Հասմիկ, ՍԿ ֆակ., 4-րդ կուրս	100000
19/02/26	Արմավիրի տարածաշրջ. պետ. քոլեջ	Օհանջանյան Գոհար, նախադպրոցական կրթ. մասնագիտ., 2-րդ կուրս, հեռակա	100000
19/02/26	ԵՊՀ հիմնադրամ	Մկոյան Հասմիկ, հոգեբան.մագիստր., 2-րդ կուրս	100000
19/02/26	Վ. Բրյուսովի անվ. համալսարան	Ղազարյան Մարինա, թարգմանչական գործ., 3-րդ կուրս	100000

19/02/26	ՀՖԿՍՊԻ հիմնադրամ	Սիմոնյան Ակոպ, կինեզոլոգիա, 4-րդ կուրս	120000
19/02/26	Հայաստանի Եվրոպական համալսարան	Սարգսյան Ալեքս, միջազգային հարաբ., 2-րդ կուրս	100000
19/02/26	ՀԱՊՀ հիմնադրամ	Մարտիրոսյան Անահիտ, հաշվող. լեզվաբ., 1-ին կուրս	100000
19/02/26	ՀԱՊՀ հիմնադրամ	Նարիմանյան Արման, տեղեկատվական անվտանգ., 2-րդ կուրս	100000
	Ընդամենը՝		**4,120,000.00**

Հիմնադրամի օգնությունը Արցախից բռնի տեղահանվածներին շարունակվում է.
Կենցաղային տեխնիկա

Անուն, Ազգանուն	Բնակության վայր	Երեխա	Տեսակը
Անտոնյան Կարինե Մուրադյան Սարգիս	ԼՂՀ Քաշաթաղի շրջ.Բերձորից	4	գազօջախ
Գրիգորյան Անահիտ Մուրադյան Սևակ	ԼՂՀ Քաշաթաղի շրջ. Բերձորից	5	գազօջախ
Խաչատրյան Վարդուհի	ԼՂՀ Քաշաթաղի շրջ. Բերձորից /բացառություն/	3	գազօջախ
Թովմասյան Ժենյա Օրդուբեկյան Սամվել	ԼՂՀ Քաշաթաղի շրջ. Բերձորից	6	հեռուստացույց
Գրիգորյան Արևիկ Խոսրովյան Էռնեստ	ԼՂՀ Քաշաթաղի շրջ.Հերիկ	9	սառնարան

ԽԵԱ Ծրագիր

Ամսաթիվ	Անուն, Ազգանուն	Բնակության Վայր	Երեխա	ՀՀ դրամ	Հովանավոր
26/10/25	Խաչատրյան Քրիստինե Խաչատրյան Դավիթ	Գ.Սոնասար/գ. Գրիբոյեդով	5	330000	C. Keligian & H.Avisto, USA
15/12/25	Սարդարյան Օվսաննա Գրիգոր Բաղդասարյան	Գ.Քարվաճառ/գ.Գետաշեն	5	330000	Nicole & David Mordecai, USA
15/12/25	Բաղդասարյան Գայանե	Շրջ.Շահումյանի/ գ.Զառ	4	330000	Global Medic, Canada
18/12/25	Մնացականյան Գոհար	Շրջ.Քաշաթաղ/ք. Արմավիր	5	330000	Global Medic, Canada
29/12/25	Մնացականյան Հասմիկ և Արմեն	Գ.Քարվաճառ/ք.Վարդենիս	4	330000	Global Medic, Canada
05/01/26	Մաթևոսյան Սեդա	Գ.Լիսագոր/գ.Բուրաստան	5	330000	Global Medic, Canada
07/01/26	Աթայան Աննա	Գ.Իշխանաձոր/գ.Լուկաշին	4	330000	Andrew V. Keligian, USA
07/01/26	Սաֆարյան Լիանա Սարգսյան Իշխան	Գ.Կոճողոտ/գ.Աղձք	9	330000	Grant & Stacy Keligian, USA
16/01/26	Ալոյան Վերգինե Խեչումյան Ռուստամ	Գ.Միրիկ/գ.Բալաք	5	330000	Grant & Stacy Keligian, USA
07/01/26	Առաքելյան Օֆիկ Դանիելյան Միհրան	Գ.Իշխանաձոր/գ.Գետաշեն	4	330000	Luke D. Keligian, USA
08/01/26	Գրիգորյան Աիդա Մաթևոսյան Դավիթ	Գ.Իշխանաձոր/գ.Բաբիկավան	3	330000	C. Keligian & H.Avisto, USA

14/01/26	Մակարյան Վաչիկ Կարապետյան Կարինե	Գ.Կոճողուտ/գ.Գեղամավան	5	330000	Andrew V. Keligian, USA
14/01/26	Մակարյան Հեղինե Բեդյան Ապրես	Գ.Պողոսագոմեր/գ.Վարսեր	9	330000	Nicole & David Mordecai, USA
14/01/26	Մանուկյան Կարինե Մանուկյան Գրիգոր	Ք.Բերձոր/գ.Զույգաղբյուր	9	330000	Katia Kusherian, USA/Armenia
10/02/26	Գրիգորյան Արևիկ Խոսրովյան Էռնեստ	Գ.Ճարտար/գ.Ներքին Սասնաշեն	9	330000	Andrew V.Keligian, USA
12/02/26	Անտոնյան Կարինե Մուրադյան Սարգիս	Ք.Բերձոր/ք.Եղվարդ	4	330000	C. Keligian & H. Avisto, USA
12/02/26	Խեչումյան Նաիրա Ստեփանյան Արտյոմ	Գ.Միրիկ/ք.Արտաշատ	3	330000	Grant & Stacy Keligian, USA
12/02/26	Հարությունյան Քրիստինե Հարությունյան Էդգար	Գ.Դրախտաձոր/գ.Գառնի	6	330000	Luke D. Keligian, USA
12/02/26	Նավասարդյան Սերինե Հակոբյան Կարեն	Քարավաճառ/ք.Հրազդան	6	330000	Luke D. Keligian, USA
12/02/26	Խաչատրյան Լիանա Ասրյան Ժիրայր	Գ.Վանք/գ.Նորավան	5	330000	Lauren Keligian, USA
06/03/26	Նուրիջանյան Շահանե Ստեփանյան Վիրաբ	Գ. Միրիկ/ք. Արտաշատ	4	330000	Lauren Keligian, USA
13/03/26	Պողոսյան Սեդա Խաչատրյան Արման	Գ. Տիգրանավան/գ.Գետափ	4	330000	Lauren Keligian, USA
23/03/26	Խաչատրյան Ալինա Երանոսյան Գրիգոր	Գ. Իշխանաձոր/գ.Երազգավորս	3	330000	Katia Kusherian, USA/Armenia

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի կազմը՝ հաստատված 2025թ. դեկտեմբերի 26-ին

Հիմնադրամի գործադիր տնօրեն- Մելիքյան Գուրգեն, էմերիտուս պրոֆեսոր, ԵՊՀ, Հայաստան
Հոգաբարձ. խորհրդի նախագահ - Ավագյան Արծրուն, էմերիտուս պրոֆեսոր, ԵՊՀ, Հայաստան
Նախագահի տեղակալ - Մելիքյան Մերի, Հայաստան

Խորհրդի անդամներ

1. Սաֆարյան Ալեքսանդր - ԵՊՀ, պրոֆեսոր, թյուրքագիտ. ամբիոնի վարիչ, Հայաստան
2. Մուրադյան Սամվել - ԵՊՀ, բան.գիտ.դոկտոր, պրոֆ., հայ գրակ. ամբիոնի պատվավոր վարիչ, Հայաստան
3. Հարությունյան Սվետլանա -ԵՊՀ, արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Հայաստան
4. Միրզոյան Քնարիկ – ԵՊՀ, թյուրքագիտ. ամբ. դոցենտ, Հայաստան
5. Գրիգորյան Մարատ-ԵՊՀ, աշխարհագրութ. և երկրաբան. ֆակ. պրոֆ. Հայաստան
6. Սեփանյան Սուրեն-ԵՊՀ դասախոս, «Ապառաժ» ակումբի հիմնադիր-նախագահ, Հայաստան
7. Շմավոնյան Շմավոն-ՀՀ վաստակավոր նկարիչ, Հայաստան
8. Պողոսյան Աշոտ - ԵՊՀ, Հայաստան
9. Քեթիպեան Արա - գրող, հասարակական գործիչ, Հայաստան
10. Վարդանյան Գուրգեն -գործարար, բարերար, Հայաստան
11. Ազիզյան Սոֆի-հիմնադրամի հաշվապահ, Հայաստան
12. Կուշերյան Կատյա-բարերար, ժուռնալիստ, Հայաստան
13. Մեհրաբյան Ստելլա-հասարակական գործիչ, Հայաստան
14. Վարդանյան Արմոնդ - լիազոր ներկայացուցիչ, բարերար, գործարար, ԱՄՆ
15. Քանյան Մերի-բարերար, ԱՄՆ
16. Ալաջաջյան Թերեզա-բարերար, ԱՄՆ
17. Ալադաղյան Վահան-բժիշկ, բարերար, ԱՄՆ
18. Մարտին Զարեհ-բարերար, ԱՄՆ

19. Փիլոսյան Սիլվա-բարերար, ԱՄՆ
20. Մահտեսի - Հակոբյանց Ռուբեն-գործարար, Գերմանիա
21. Մարդոյան Խորեն-հասարակական գործիչ, Կանադա
22. Կահվե Թոնի Շուքրի-բարերար, Մեծ Բրիտանիա
23. Նազարյան Բագրատ-բարերար, Մեծ Բրիտանիա
24. Վանեցյան Կարեն-գործարար, բարերար, Շվեյցարիա
25. Շահնազարյան Հենրիկ-բժիշկ, բարերար, Շվեդիա
26. Բորոյան Ռաֆիկ-բժիշկ, բարերար, Շվեդիա
27. Կարապետյան Ալեքսան-ֆրանս-հայկական մշակութային միության նախագահ, Ֆրանսիա

Գրական անկյուն.

հոգևորականի չափաբերական մտորումներ

ԿԵՍ-ԿԻՍԱՏՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Կիսված կյանքերից
Կիսատված մահեր,
Կիսատված արցունք
Կիսված արյունի:
Կիսված մտքերից
Կիսատված հոգի,
Կես դարձած մարմին
Կիսատված սրտի:
Կիսված հայացքներ
Կիսված ապրումի,
Կիսված ապագա
Կիսատված հույսի:
Կիսված արեգակ
Կիսատված լուսին,
Կես դարձած երկրի
Կիսատված երկինք:
Կիսված հավատքի
Կիսատված աղոթք,
Կիսված տաճարի
Կիսատված քարոզ:
Կիսված տեսիլքի
Կիսված երազներ,
Կիսված նայվածքով
Կիսատված աչքեր:
Կիսատված մարդկանց
Կիսված տիեզերք,
Կիսատված աշխարհ
Կես դարձած եզերք:
Կիսված չընտրության
Կիսված ընտրություն,
Կիսատ աթոռին
Կիսված մթություն:
Կիսատված գլխում
Կիսացած հղացք,
Կիսված թռիչքի
Կիսատված ճախրանք:
Կիսված երկունքով
Կիսատված ծնունդ,
Կիսահղացած
Կես դարձած սերունդ:
Կիսված ճամփեքի
Կիսատված ճամփորդ,
Կիսված աղբյուրից
Կիսահագեցող:
Կիսված ուխտավոր
Կիսատված ուխտի,
Կիսված խնկարկում
Կիսված խորանին:
Կիսված պատմություն
Կիսատված սիրո,
Կիսաձև պատանք
Կիսատ շիրիմի:
Կեսմեռել թափոր
Կիսատված թաղման,
Կես հոգեհանգիստ
Եվ կես հոգեհաց:
Ստվերներ դարձած
Մեփական կեսի,
Կիսված ստվերը
Մեփական եսի:
Կիսագիշերվա իրականության
Կիսակյանք դարձած նշույլն ամբողջի
Կփշրի շղթան կես կապանքների
Աննվազ հույսով նվաճող լույսի:
Կծագի շողը հաղթող համայնի,
Ինչպես նշխարը ցորենահավաք,
Խաչված ու Հաղթած Պատարագվողի
Զոհասեղանին ընծայված արյամբ:
Կրկին կճախրես վերհառնո՛ղ հոգի,
Կես մոխիրներից մխացող կեսի
Կելնեն գնդերդ հրե կառքերի,
Որպես դատաստան կես-կիսատների:

Բագրատ եպիսկոպոս Գալստանյան
(Տավուշեցի)
09-10.11.2021

ՀՀ վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանի «Արարատ»-ներից մեկը:

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ Ս. Պ. , բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
Ավագյան Ա., բ.գ.դ., պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Նյութերի դասակարգումը՝
հոգաբարձության խորհրդի անդամ
Մերի Մելիքյանի

Համարի շարվածքը, ձևավորումը՝ Ս. Մուրադյանի
Տպաքանակը՝ 99:
Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան-0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ, Հեռ.՝
060710617; 055-522936; 010-552537: